ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԲԱԺԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

1.1. **Ներածություն**

Սույնով՝ հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, տալիս եմ իմ համաձայնությունը «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին (այսուհետ՝ **Տվյալներ մշակող**)՝ հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան 105**,** **Տվյալների սուբյեկտի** հանրամատչելի, կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելու և հրապարակելու համար:

1.2 **Անձնական տվյալների մշակման նպատակը**

Նպատակներն են՝

1.1.1 **Տվյալներ մշակողի** ծրագրերում և նախաձեռնություններում մասնակցության կազմակերպում,

1.1.2 մարքեթինգային, տեղեկատվական և կրթական արշավների իրականացում և համապատասխան նյութերի հրապարակում,

1.1.3 կրթական գործընթացի և միջոցառումների լուսաբանում,

1.1.4 հիմնադրամի կամ հիմնադրամի ենթակայության տակ գտնվող ուսումնական/վարչական մասնաշենքերի, բակի կամ այլ ենթակառուցվածքի մուտքի և ելքի հասանելիության ապահովում:

2. ՄՇԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

2.1. Մշակման ենթակա են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12, 13 և 15 կետերով սահմանված հետևյալ անձնական տվյալները՝

2.1.1. Անուն, ազգանուն, հայրանուն:

2.1.2. Էլեկտրոնային փոստի հասցե:

2.1.3. Բջջային հեռախոսահամար:

2.1.4. Մասնագիտական պատկանելիություն (աշակերտ, ուսանող, շրջանավարտ, աշխատակից և այլն):

2.1.5. **Կենսաչափական տվյալներ**՝ լուսանկար, տեսագրություն:

2.1.6. Հանրային ծառայությունների համարանիշ:

2.1.7. Այլ հանրամատչելի անձնական տվյալներ:

2.2. **Անձնական տվյալների հետ իրականացվող գործողությունները**

Իրականացվելու է անձնական տվյալների մշակում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2 կետի համաձայն, մանսավորապես՝

2.2.1 Տվյալների հավաքագրում և գրանցում:
2.2.2 Դասակարգում, պահպանում և օգտագործում:
2.2.3 Լուսանկարների և տեսանյութերի դեպքում՝ հավաքագրում, արխիվացում, գրաֆիկական մշակում և հնարավոր հրապարակում:
2.2.4 Տվյալների տրամադրում ՀՀ օրենսդրությամբ և սույն համաձայնագրով սահմանված երրորդ անձանց:

3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Տվյալների սուբյեկտների շրջանակը հետևյալն է՝

3.1. ՀԱՊՀ հիմնադրամի աշխատակիցներ:
3.2. ՀԱՊՀ հիմնադրամի ուսանողներ:
3.3. ՀԱՊՀ հիմնադրամի աշակերտներ:
3.4. ՀԱՊՀ հիմնադրամի նախակրթարանի սաներ:
3.5. ՀԱՊՀ հիմնադրամի այցելուներ:
3.6. ՀԱՊՀ հիմնադրամի հյուրեր:
3.7. ՀԱՊՀ հիմնադրամի գործընկերներ:

4. ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. **Տվյալներ մշակողը** կարող է իրականացնել լուսանկարահանում և տեսաձայնագրում ՀԱՊՀ հիմնադրամի ենթակայության տակ գտնվող ամբողջ տարածքում կամ ենթակայության տարածքից դուրս՝ ՀԱՊՀ հիմնադրամի հետ անմիջական առնչություն ունեցող ցանկացած գործընթացի, այդ թվում՝ կրթական, պետական, հանրային կամ միջազգային միջոցառումների ընթացքում:

4.2. Ստացված մեդիա նյութերը կարող են պարունակել **Տվյալների սուբյեկտի** կենսաչափական անձնական տվյալներ:

4.3. **Տվյալներ մշակողը** իրավունք ունի՝

4.3.1. **Տվյալների սուբյեկտի** կենսաչափական անձնական տվյալներ պարունակող մեդիա նյութերը հրապարակել **Տվյալներ մշակողի** սոցիալական մեդիայի պաշտոնական էջերում,
4.3.2. **Տվյալների սուբյեկտի** կենսաչափական անձնական տվյալներ պարունակող մեդիա նյութերը օգտագործել ուսանողական գրքույկներում, շնորհանդեսներում, հաշվետվական նյութերում,

4.3.3. **Տվյալների սուբյեկտի** կենսաչափական անձնական տվյալներ պարունակող մեդիա նյութերը հրապարակել և օգտագործել հիմնադրամի հաղորդակցության և կառավարման բոլոր հարթակներով և գործիքամիջոցներով՝ ներառյալ թվային:

4.3.4. **Տվյալների սուբյեկտի** կենսաչափական անձնական տվյալներ պարունակող մեդիա նյութերը փոխանցել գործընկեր կամ հանրային զանգվածային լրատվամիջոցներին հետագա հրապարակման համար:

5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. **Տվյալները սուբյեկտը** կամ իր **լիազորված ներկայացուցիչը** իրավունք ունի՝

5.1.1. տեղեկանալ, թե ինչ տվյալներ են մշակվում **Տվյալների սուբյեկտի** վերաբերյալ,

5.1.2. պահանջել դրանց ուղղում, արգելափակում կամ ոչնչացում, եթե **Տվյալների սուբյեկտի** անձնական տվյալների մշակումը չի իրականացվել ՀՀ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և սույն համաձայնագրի կետերին համաձայն կամ ոտնահարում է **Տվյալների սուբյեկտի** սահմանադրական իրավունքները: